Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
ապրիլի 1-ի N 340 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
1	2	3	4	5	6
1.	Ջրավազանային կառավարման մարմիններում ավազանային ջրային պետական կադաստրի բազայի բաղադրիչների և այդ տվյալների միմյանց և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության համապատասխան բաժնի հետ էլեկտրոնային փոխանակման համակարգի ստեղծում	ջրավազանային կառավարման մարմինների առավել արդյունավետ գործունեության ապահովում, ջրային պետական կադաստրի ինստիտուտի կատարելագործում, աջակցություն ջրավազանային կառավարման պլանների մշակման, կիրարկման ու թարմացման աշխատանքներին	ՀՀ բնապահպանության նախարարություն	2010-2011 թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի շրջանակներում միջազգային դոնոր կազմակերպություններ
2.	Ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում որոշումների ընդունմանն աջակցող համակարգի (համակարգչային ծրագիր) ստեղծում	ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում, ջրային ռեսուրսի առկա պոտենցիալի արդյունավետ օգտագործում, կառավարման թափանցիկության բարձրացում, որոշումների (մասնավորապես, ջրօգտագործման թույլտվություն-	ՀՀ բնապահպանության նախարարություն	2011-2012 թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի շրջանակներում միջազգային դոնոր կազմակերպություններ

1	2	3	4	5	6
		ների հայտերի գնահատման մասին) ընդունման ժամանակ սխալի նվազեցում			
3.	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության աշխատողների վերապատրաստման անհրաժեշտության ուսումնասիրություն	արդի պայմաններում ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության աշխատողների գիտելիքների և վերապատրաստման արդյունքների գնահատում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2010-2011 թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի շրջանակներում
4.	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության աշխատողների վերապատրաստում	ինստիտուցիոնալ բարեփոխումների շրջանակներում քաղաքացիական ծառայողներին ջրային ռեսուրսների կառավարման արդիական մեթոդներին ծանոթացում և ներդրում	ՀՀ բնապահպանության նախարարություն	շարունակական (համապատասխան ֆինանսավորման առկայության դեպքում)	ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի շրջանակներում միջազգային դոնոր կազմակերպություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ